Հաստատում եմ՝

Գորիսի պետական համալսարանի

ռեկտոր, տ.գ.թ., դոցենտ Ն.Վ. Վանդունց

22 մայիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հասմիկ Արամի Խաչատրյանի՝ «Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում» ԺԳ.00.02- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ՝ քննարկված Գորիսի պետական համալսարանի բանասիրության և պատմաիրավագիտության, ընդհանուր մանկավարժության և հատուկ կրթության ամբիոնների համատեղ արտահերթ նիստում (22. 05. 2024թ.,արձ.թիվ 10)՝ բաց քվեարկությամբ:

Ներկայացվող ատենախոսության թեման նվիրված է ՀՀ միջին դպրոցում աշակերտների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ուսումնասիրմանը: Միջին դպրոցի մայրենիի առարկայական ծրագրի կարևոր հիմնախնդիրներից են աշակերտների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, ստեղծարարության, հաղորդակցական, համագործակցային կարողությունների ձևավորումը: Նոր կրթության համակարգը ենթադրում է կրթական նոր ծրագրեր և չափորոշիչներ, որոնց ուղղությամբ լայն գործունեություն է ծավալվում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի դպրոցներում: Ներկայացված ատենախոսությունը վերոնշյալի արձագանքն է:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք իրար փոխլրացնող գլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, եզրակացություններից, առաջարկություններից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Բանավոր խոսքի զարգացումը որպես աշակերտների մտածողության և աշխարհայացքի ձևավորման գործոն» վերնագրով գլխում ատենախոսը հիմնավորել է խոսքի կարևոր գործոն լինելը, որի շնորհիվ կատարվում է մտքերի փոխանակություն՝ սեփական մտքերի արտահայտում և ուրիշների մտքերի հասկացում ու յուրացում, նշել, որ խոսքը, հասարակական գործոն

լինելով, հասարակության մեջ իրականացնում է հաղորդակցում, մարդկության՝ անցյալի ու ներկայի քաղաքակրթության նվաճումների և փորձի, տվյալ սերնդի հոգևոր մշակույթի փոխանցում: Հեղինակը վերլուծել է նաև բանավոր խոսքի զարգացման պատմական ընթացքը անտիկ դարաշրջանից մինչև մեր օրերը: Անդրադարձել է նաև ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներին և ծրագրերին՝ կարևորելով հիմնական դպրոցում դասավանդվող ուսումնական բոլոր առարկաների դերն աշակերտների բանավոր խոսքի զարգացման գործընթացում: Ատենախոսը հիմնավորել է, որ 5-9-րդ դասարանների դասագրքերում զետեղված ուսումնական նյութերի շուրջ աշխատանքի մեթոդապես ճիշտ կազմակերպումը կարող է նպաստել աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը, ներկայացրել է հանրակրթական հիմնական դպրոցի աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը միտված աշխատանքների կազմակերպման գործընթացը՝ ընդգծելով այդ գործընթացի կարևորությունն անձի աշխարհայացքի և արժեհամակարգի ձևավորման գործում:

Ատենախոսության երկրորդ՝ «Խոսքի տեսակները. սովորողների՝ խոսքի տարբեր տեսակներով արտահայտվելու կարողության զարգացման մեթոդները» խորագրով գլխում դիտարկել է խոսքն իր տարբեր դրսևորումներով ու տարատեսակներով, առանձնահատկություններով, ընդգծել աշակերտների խոսքի զարգացման գործընթացում դրանց ուսուցման կարևորությունը: Խոսքի տեսակների ուսուցման գործընթացն առավել նպատակային և արդյունավետ կազմակերպելու, աշակերտի մտածելու կարողություն ձևավորելու, տարբեր կարողունակություններ մշակելու նպատակով առաջարկվել են այնպիսի բաշխիչ նյութեր, որոնց շնորհիվ աշակերտները կկարողանան ոչ միայն նայել կամ լսել, այլև տեսնել, ընկալել երևույթը, սեփականացնել այն, արտահայտել կապակցված խոսքով՝ ձեռք բերելով խոսքի բարեկիրթ մշակույթ: Ատենախոսը հիմնավորել է սովորողների բանավոր խոսքի զարգացման նպատակով միջին դպրոցում խոսքի միասնական պահանջներ սահմանելու անհրաժեշտությունը՝ այն դարձնելով դասավանդող բոլոր ուսուցիչների և մանկավարժական հանրության հոգածության առարկան: Այս գլխում հեղինակն անդրադարձել է նաև այն հանգամանքին, որ յուրաքանչյուր երեխա դաստիարակվում է կրթվածության տարբեր մակարդակ ունեցող ընտանիքում, որտեղ նա լսում և ընդօրինակում է հարազատների խոսքն ու բառապաշարը՝ որպես օրինակ ունենալով նրանց արժեհամակարգը, հետևաբար դպրոցը, բարեկիրթ ու գրագետ սերունդ դաստիարակելուց զատ, իր վրա է վերցնում նաև աշակերտների դաստիարակության, հոգեկերտվածքի ձևավորման պարտականությունը: Այսինքն՝ սովորողների դաստիարակությունն իրականացվում է հոգու՝ հետ միասին. դաստիարակվում է ամբողջական մարդը:

Ատենախոսության երրորդ՝ «Բանավոր խոսքի զարգացման մեթոդական համակարգը» խորագրով գլխում անդրադառնալով մայրենիի դասերին միջառարկայական կապերի ապահովմանը՝ հեղինակն ընգծել է, որ ծրագրով նախատեսված տարբեր առարկաների ուսումնասիրման գործընթացում մայրենի լեզուն ունի կենտրոնական դեր ու նշանակություն. նրա միջոցով է իրականացվում ողջ

ճանաչողական գործընթացը: Ուսումնական այլ առարկաների ուսումնասիրության ընթացքում աշակերտների ինտելեկտի, մտածողության, գիտակցության զարգացումը, նրանց մեջ համամարդկային արժեքների դաստիարակումն իրականացվում է մայրենի լեզվի միջոցով: Եվ որպեսզի կրթենք ու դաստիարակենք մարդկային բարձր արժեհամակարգ, լայն մտահորիզոն և բարձր ինտելեկտ ունեցող մտածող և գիտակից սերունդներ, հետևաբար նաև խոսք կառուցելու և հաղորդակցվելու կարողություններ, անհրաժեշտ է ճիշտ և նպատակային կազմակերպել ուսուցման գործընթացը, սովորողների մեջ զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները, բարձրացնել նրանց ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները բոլոր դասերին և դրանց յուրաքանչյուր փուլում: Այս գլխում ատենախոսը դիտարկել է նաև այն համոզմունքը, որ դպրոցական բոլոր առարկաներն իրենց շրջանակներում նախատեսված գիտելիքների և կարողությունների միջոցով պետք է նպաստեն աշակերտի գիտակցության մեջ աշխարհի ամբողջական պատկերը կառուցելուն, իսկ աշակերտներն էլ իրենց հերթին, սովորելով ուսումնական առարկաները և համադրելով ստացած գիտելիք-պատկերները միմյանց հետ, ամրապնդեն և յուրացնեն դրանք՝ կազմելով աշխարհի վերաբերյալ սեփական պատկերացումը:

Կարևորելով ուսումնառողների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ ատենախոսը հիմք է ընդունել հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներում և ծրագրերում ներկայացվող պարտադիր պահանջները, վերջնարդյունքները: Բառապաշարի հարստացման գործընթացը համարելով խոսքի զարգացման հիմնաքար՝ ատենախոսի կողմից մշակվել և փորձարկվել է «Խոսքի զարգացման քայլաշարային մեթոդը», որի կիրառման արդյունքում արձանագրվել է դրական շարժընթաց, և որը հավանության է արժանացել պարապող ուսուցիչների կողմից:

Հետազոտության շարադրանքում Հասմիկ Խաչատրյանը տրամաբանական հաջորդականությամբ լուծել է նպատակով պայմանավորված խնդիրները, ապացուցել հիմնադրույթները, հիմնավորել նորույթն ու հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմագրում:

Գնահատելով ատենախոսության բարձր որակը թե՛ լեզվական, թե՛ մեթոդական առումով՝ այնուհանդերձ ունենք մասնակի նկատառումներ և առաջարկություններ, որոնք օգտակար կլինեն հեղինակին:

1. Տրամաբանական որոշ հարցերի մտահանգումներ պարզունակ են. զորօրինակ՝ «Նրանց մեջ ձևավորվեցին բարոյական բարձր հատկանիշներ» (էջ 41):

Քանի որ նման հատկանիշները միանգամից չեն ձևավորվում, մենք կարող ենք ընդամենը եզրակացնել, որ դրանք բարոյական բարձր հատկանիշների ձևավորման նախադրյալ են:

2. Շարահյուսական ավելորդաբանություն է դիտարկված էջ 180-ի 1-ին եզրահանգման մեջ (ուսումնասիրություններին. . . . . այդ խնդրին):

3. Հավելված 5-ում ներկայացված դասի պլանը պետք է ձևակերպվեր հանրակրթական գործող չափորոշիչներին և առարկայական ծրագրին համապատասխան՝ ըստ այդմ հստակեցնելով խնդիրները (քառաբաղադրիչ) և վերջնարդյունքները:

4. Ատենախոսության նպատակը (նույնը նաև վարկածում) ձևակերպված է «ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի միջին օղակի հայոց լեզվի .....», մինչդեռ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» օրենքներով «միջին օղակը» կոչվում է միջին դպրոց: Բացի այդ, հետազոտության օբյեկտում, վարկածում նշվում է հիմնական դպրոց արտահայտությունը: Հաշվի առնելով, որ հիմնական դպրոցը ընդգրկում է նաև տարրական դպրոցը՝ ճիշտ կլիներ օգտագործել օրենքով սահմանված՝ միջին դպրոց արտահայտությունը:

Վերոնշյալ նկատառումները չեն ազդում ատենախոսության գիտական արժեքին, քանի որ ատենախոսին հաջողվել է լուծել առաջադիր խնդիրը, և պաշտպանության է ներկայացնում թեկնածուական ատենախոսության պահանջները բավարարող հետազոտություն:

Հասմիկ Արամի Խաչատրյանի՝ «Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում» խորագրով ատենախոսությունը բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին ներկայացվող ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ:

ԳՊՀ-ի բանասիրության և պատմահրավագիտության ամբիոնի

վարիչ՝ _____Լ. Ներսիսյան

ԳՊՀ-ի ընդհանուր մանկավարժության և հատուկ կրթության ամբիոնի

վարիչ՝ _____Հ. Պետրոսյան

Լ. Ներսիսյանի և Հ. Պետրոսյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ԳՊՀ-ի ՄՌԿ բաժնի ղեկավար՝ _____Հ. Միրզոյան

22.05.2024թ.